

# 1912-14Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ ԵՒ

## ԳՐԻԳՈՐԻՍ ՎՐԴ. ՊԱԼԱՔԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԳԷՈՐԳ Է. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՆԱՐԵԿ ՅԱԿՈԲԵԱՆ  
narhak1991@gmail.com

Հայկական Հարցը հայոց պատմության ամենաքաղաքականացուած, ամենազգացմունքային եւ գիտական հրատապ ուսումնասիրութիւն պահանջող հիմնախնդիրն է: Նրա իրաքանչիւր ընկալում առաջադրել եւ առաջադրում է բախումնային դիտանկիւններ: Յարդ կատարուած զանազան հետազոտութիւններն իրենց աղբիւրագիտական եւ տեսական հարցադրումներով լրացնում, հարստացնում եւ առաջ են տանում այս հիմնախնդրի ուսումնասիրութիւնը:

Այս հրապարակումը նպատակ ունի աղբիւրագիտական վերլուծութեան միջոցով Էջմիածնի Կաթողիկոսական Դիւանի Արխիւային Ֆոնդի հաւաքածուից ցուցանել կարելոք մի փաստաթուղթ, որը կարող է յաւելեալ լոյս սփռել Հայկական Հարցի պատմութեան վրայ, իմաստաւորել կամ վերաիմաստաւորել որեւէ շրջափուլ: Մեր նպատակն է նաեւ աղբիւրագիտական համադրութեան մեթոդով պարզել, թէ ինչպիսի՝ դերակատարում ունէր Հայ Առաքելական Եկեղեցին Հայկական Հարցի ճակատագրում՝ տուեալ ժամանակահատուածում, ինչպիսի՝ ն Էին Եկեղեցու տեսական մօտեցումներն ու տեսլականը՝ Հայկական Հարցի լուծման վերաբերեալ, ինչպիսի՝ գործնական քայլերի են դիմել Եկեղեցու հայրերը քաղաքական խառնակ ժամանակահատուածում:

Ընդունուած տեսակէտի համաձայն, Հայկական Հարցը հայ ժողովրդի քաղաքական պատմութեան խնդիրների այն ամբողջութիւնն է, որը կապուած է հայ ժողովրդի համախմբման, Հայկական Լեռնաշխարհում հայկական պետականութեան վերականգնման եւ այդ նպատակներին հասնելու համար մղուած հայ ազգային-ազատագրական պայքարի, իր բնօրրանում ազգային համախմբման ձգտման հետ<sup>1</sup>:

Հայկական Հարցի պատմութեան մէջ կարելոք փուլ է 1912-14 հանգրուանը: 1912-14՝ բալկանեան ժողովուրդների ազգային ազատագրական պայքարի հետեւանքով նոր հարուած հասցուեց թուրքական բռնատիրութեանը, եւ Հայկական Հարցը դարձեալ դարձաւ մեծ տերութիւնների եւ Օսմանեան Թուրքիայի միջեւ բանակցութիւնների նիւթ: Արեւմտեան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու համար սկսուեց երկար քաշքշուք, որը շարունակուեց մինչեւ Առաջին Աշխարհամարտի սկիզբը:

Կաթողիկոսական դիւանի արխիւային հաւաքածուն հարուստ է նշեալ ժամանակաշրջանի փաստաթղթերով, որոնք հիմնականում նամակներ են՝ բնագիր եւ պատճէն, որոնց մեծ մասը հրատարակուած չէ:

Ստորեւ հրատարակում ենք ժամանակի ականաւոր հոգեւոր գործիչներից Գրիգորիս վարդապետ Պալաքեանի<sup>2</sup>՝ 1912 Հոկտեմբեր-Նոյեմբերին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե.ին յղած ցարդ անտիպ նամակը Հայկական Հարցի վերաբացման առիթով<sup>3</sup>:

Ներկայացուող նամակում Պալաքեանը անդրադարձ է կատարում Օսմանեան Կայսրութեան հայաբնակ գաւառների վիճակին, ինչպէս նաեւ արեւմտահայ շրջանակներում տիրող տրամադրութիւններին: Այն սկսում է բաւականին յուզական տողերով. վարդապետը, գիտակցելով իրավիճակի ամբողջ լրջութիւնը, գրում է. *«Եթէ օգտուիլ չգիտնանք ներկայացած այս բացառիկ պատեհութենէն, իրաւամբ պիտի ենթարկենք զմեզ ապագայ հայ սերունդներու դատին, դատաստանին եւ անէծքին»*<sup>4</sup>: Այնուհետեւ, անցում կատարելով քաղաքական իրավիճակին նշում է, որ թուրքահայերի վիճակի բարեկարգման գործը ամբողջութամբ վերապահում է Ամենայն Հայոց ազգընտիր Կաթողիկոսին<sup>5</sup>: Սա նշանակում էր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ստանձնելով Հայկական Հարցի վերաբացման պատասխանատուութիւնը, զլխաւոր հարցի լուծման համար սկսուելիք գործընթացում, իր աչքի առջեւ ունենալով արեւմտահայութեան վիճակի պատկերը, պէտք է ունենար յստակ ռազմավարութիւն:

Արեւմտեան Հայաստանում տեղի ունեցող վայրագութիւնները լայնօրէն իրենց արձագանգն էին գտնում հայկական պարբերականների էջերում: Ընդհանուր միտումը եւ տիրապետող կարծիքն այն էր, որ պէտք էր դիմել օտար երկրների միջամտութեանը՝ Արեւմտեան Հայաստանում որոշակի փոփոխութեան հասնելու համար: *Արարատը՝* անդրադարձ կատարելով արեւմտահայութեան վիճակին գրում է. *«այդպիսի պետութեան խօսք հասկացնել կարող է միմիայն ուժը - արտաքին զօրեղ եւ վճռական միջամտութիւնը»*<sup>6</sup>: Պալաքեանը, տեսնելով բալկանեան ժողովուրդների պայքարի արդիւնքը, նամակում գրում է. *«մեր փրկութեան միակ յոյսը Թուրքիոյ դրացի Ռուսական մեծագոր կայսրութիւնը կրնայ լինել քանի որ Թուրքիոյ ազատագրուած բոլոր ժողովուրդները եւ ազգերը շնորհիւ Ռուսիոյ կայսրներու ազատագրուած են»*<sup>7</sup>: Վարդապետն այլեւս տեղեկութիւններ չի տրամադրում յետագայ քայլերի եւ ծրագրերի մասին, նշելով. *«մանրամասնութեանց չպիտի կրնամ մտնել թուղթին ասկէ աւելին չվստահելով»*<sup>8</sup>:

Նամակը բաւականին հարուստ է արժէքաւոր տեղեկութիւններով: Պէտք է նկատել, որ Ապահովութեան Յանձնաժողովը տեսնելով արեւմտահայերի օրէցօր վատթարացող դրութիւնը եւ այն, որ կուսակցութիւնները այլեւս ունակ չէին իրենց մասնատուածութեամբ եւ

կուսակցական շահից այն կողմ ոչինչ չտեսնելով որեւէ էական խնդիր լուծել, դիմում է կաթողիկոսին, որպէսզի վերջինս իր ձեռքը վերցնի Հայկական Հարցի վերաբացման պատասխանատուութիւնը:

Մեր կարծիքով, պատմական տուեալ պահին Ապահովութեան Յանձնաժողովի որոշումը ճիշտ քայլ էր, քանի որ հայոց հարցի յաջող լուծման գրաւականներից մէկը համարւում էր հայ յեղափոխական կուսակցութիւնների մեկուսացումը ներկայ դիւանագիտական գործընթացներից, նրանց միջամտութեան բացառումը, քանի որ պետք էր թողնել, որ հայ ժողովուրդը ի նքր հանդէս գայ իր համաժողովրդական եւ ոչ թէ կուսակցական բողոքներով<sup>9</sup>:

Պետք է նշել, որ դեռեւս 1910ին Հայ Առաքելական Եկեղեցին արգելում է եկեղեցիներում հաւաքներ եւ հանդիպումներ կազմակերպել<sup>10</sup>:

Աչքի առաջ ունենալով կուսակցութիւնների անյաջող գործողութիւնների հետեւանքով ժողովրդի էլ աւելի ծանրացած վիճակը եւ Պօղոս Նուպարի<sup>11</sup> հանդիպումը Ֆրանսիայի վարչապետ Պուանկարեի<sup>12</sup> հետ, երբ վեջինս նոյնպէս խորհուրդ էր տուել հայկական բարենորոգումների խնդրի լուծումը կապել Ռուսաստանի հետ<sup>13</sup>, Գեորգ Ե. Կաթողիկոսը որդեգրեց Ռուսական կողմնորոշում:

Հրատարակուող նամակում կատարել ենք որոշ ուղղադրական շտկումներ:

23 Հոկտեմբերի/6 Նոյեմբերի 1912թ.

Կ. Պոլիս

Նորին Ս. Օծութիւն Ս. Տ. Գեորգ Սրբազնագոյն կաթողիկոս  
Ամենայն Հայոց ի Մայր Աթոռ  
Ս. Էջմիածին

Վեհափառ Ս. Հայրապետ

Ապաքէն, կ'ապրինք պատմական հազուադէպ այնպիսի օրերու մէջ, որ դարեր միայն կը ծնին, եւ եթէ օգտուիլ չգիտնանք ներկայացած այս բացառիկ պատեհութենէն, իրաւամբ պիտի ենթարկենք զմեզ ապագայ հայ սերունդներու դատին, դատաստանին եւ անէծքին:

Ստուգիւ յոյժ մխիթարական է, որ ընդհանրական Ս. Հովուապետդ լրութեան ազգիս առձեռն ամէն միջոց ի գործ կը դնէք դարման մը տանելու համար թուրքաբնակ բազմաչարչար եւ տառապեալ հօտիդ, որ շատ լալէն, ցամքեցաւ արցունքը աչքերուն մէջ, եւ շարունակաբար կոտորուելէն ու ջարդուելէն, ցամքեցաւ այլեւս արիւնը երակներուն մէջ ու այժմ իւր արիւնոտ աչքերը յառած է ողջոյն հայութեան լուսատու մայրն ի Ս. Էջմիածին, ուր ամէն ոք կռահած է, թէ բաներ կը դառնան:

Թուրքիաբնակ հայ ամբողջ ժողովուրդը անհունս երախտապարտ է, որ Ձեր Վեհափառությունը ստանձնած է գործին նախաձեռնությունը<sup>14</sup>, որովհետեւ ի դէպ է յիշել, թէ ոչ թէ դժուար է, այլ բացարձակապէս անհնար է Ազգ. Պատրիարքարանիս յայտնի կերպով գործին մէջ մխրճուիլ, որ կրնայ ոչ միայն օգտակար չլլալ, այլեւ աղէտաբեր հետեւանքներ ունենալ, որուն դառն փորձերն անցեալին մէջ մէկէ աւելի կան ու կը մնան:

Ահա այս հրամայողական շարժառիթներով Ամեն Ս. Պատրիարքը Կեդ. Վարչութենէն բխած Ապահովութեան Յանձնաժողովը<sup>15</sup> որուն իբր անդամ կը վարեմ նաեւ ամբողջ թղթակցութիւնը, այսպէս գծած է իր գործունէութեան ուղղութիւնը, որ Ազգ. Պատրիարքարանս իր բարօք պաշտօնական յարաբերութիւնը շարունակելով հանդերձ (օսմ. կառավարութեան հետ) թուրքահայ ժողովուրդի վիճակին արմատական բարելաւման գործին նախաձեռնութիւնը թողու Ամենայն Հայոց ազգընտիր Սրբազան Հայրապետիդ, որպէս զի մի արասցէ գործին անյաջողութեան պարագային, պատրիարքարանը նահանջի ճամբայ մը ունեցած լինի՝ Թուրքահայը ազատ պահելով ձախորդութեան հաւանական հետեւանքներէն: Այս ուղղութիւնը ցոյց տուած ենք նաեւ արտասահմանեան հայ գաղութներուն: Փարիզի, Լոնտոնի, Նիւ-Եորքի, Մոֆիայի հայ գաղութներէ պաշտօնապէս եղած դիմումներուն պատասխան ու հրահանգ տրուած է ուղղակի դիմել Ձեր Վեհափառութեան ի Ս. Էջմիածին: Գործնական ապացոյցը տալու համար որոնց որ անկ է, թէ Ազգիս Ս. Հայրապետը ինքնագլուխ չէ, որ իր դիմումները կը կատարէ, այլ ամբողջ Հայ Ազգը իւր հատուածներով ըլլան ի Թուրքիա, Պուլկարիա, Ռումանիա, Ֆրանսա, Անգլիա, Ամերիկա եւ ի սփիւռս աշխարհի, իրենց սիրեցեալ Հայրապետի հետ են, որ միշտ իրաւունք ունի իբր ազգընտիր հովուապետ լրութեան ազգիս, յանուն ազգի խօսելու, դիմելու, խնդրելու եւ պահանջելու, եւ թէ Ազգ. Պատրիարքարանս, նոյնիսկ եթէ բռնադատեն անհատ է եւ անկարող է Դատաւոր Հայրապետական իրաւանց եւ իրաւասութեանց դէմ ծառանալ:

Միեւնի է յուսալ, թէ այս ուղղութիւնը օգտակար եւ հաճելի կը թուի նաեւ Վեհափառ Հայրապետիդ:

Ազգիս մէջ, թէ արտասահմանի եւ թէ կեդրոնիս մէջ, ընդհանուր համոզումը սա է, թէ անցեալ այնքան արիւնոտ դառն փորձերէ վերջ, ի զուր է հաւատալ Օսմ. Կառավարութեան բարեկարգութեան խոստումներուն<sup>16</sup> եւ մանաւանդ հայոց վիճակը հինապէս բարելաւելու անկարող է (եթէ անկեղծօրէն փափագի իսկ), քանի որ կազմակերպչական արժանիք չունի եւ աւելի լաւ կը համարի իր երկիրները մէկիկ մէկիկ ձեռքէ հանել, քան բարեկարգել: Հետեւապէս պատմական եւ ներկայ դէպքերու համոզիչ այսքան ապացոյցներէն վերջ ընդհանուր փափագը սա է, թէ մեր փրկութեան միակ յոյսը Թուրքիոյ

դրացի Ռուսական մեծագոր կայսրությունը կրնայ լինել, քանի որ Թուրքիոյ ազատագրուած բոլոր ժողովուրդները եւ ազգերը շնորհիւ Ռուսիոյ կայսրներու ազատագրուած են, եւ մենք՝ հայերս ալ այժմ բոլորովին տարբեր ճակատագիր եւ բախտ ունեցած պիտի լինէինք, եթէ Պերլինի վեհաժողովով Սան-Սթեֆանոյի դաշնագրութիւնը չայլափոխուէր<sup>17</sup>, ուր Ռուս. կառավարութիւնը շատ գործնական կերպով՝ Հայոց վիճակին բարելաւութիւնը ստանձնած էր, մինչեւ այդ իր յաղթական բանակները ի Կարին պահելու պայմանով<sup>18</sup>:

Ս. Պատրիարքի հետ ծայր աստիճան գաղտնապահութեամբ գործող մարմինս ալ այս ուղղութեամբ արդէն կը գործէ, եւ այս մտօք եւս գաղտնի դիմումներ եղան մայրաքաղաքիս Ռուս դեսպան Պարոն Կիրսի<sup>19</sup>, որ իր կարգին հաղորդէ ի Բեդերպուրգ:

Ռուս պետութեան պաշտպանութեան դիմելու թելադրութիւն կ'ըլլայ ամէն ազգային եւ օտար շրջանակներէ եւ նոյն մտօք թելադրութիւն ըրած է նաեւ պարոն նախարարապետն Ֆրանսայի Փուանքառէն, Վսեմաշուք Պօղոս Փաշա Նուպարի հետ ունեցած քաղաքական մէկ տեսակցութեանը միջոցին:

Կը ցաւիմ, որ ասկէ աւելի մանրամասնութեանց չպիտի կրնամ մտնել թուղթին ասկէ աւելին չվստահելով, եւ եթէ այսքանն ըրի, պարտականութիւն համարեցի Վեհափառ Հայրապետիդ վաւերական տեղեկութիւններ հաղորդել մեր կողմերու իրադարձութեանց մասին՝ խնդրելով, որ խորհրդապահաբար գրուած այս նամակը միայն Ձեր Վեհափառութեան ուշադրութեան արժանանայ, որպէսզի հնար լինի ինձ, ըստ Ձեր Ս. Օծութեան փափագանաց եւ խոստմանս, մերթ տեղեկութիւն հաղորդել, միշտ խորհրդապահաբար, անշուշտ:

Եւ որպէսզի Ս. Պատրիարքը եւ ապահովութեան յանձնաժողովս կարենանք անվերապահ կերպով ամէն մեր խորհուրդներուս եւ իրադարձութեանց իրազեկ ընել Ձեր Վեհափառութիւնն, արժան դատեցինք ի Ս. Էջմիածին փութացնել հարկ եղած յանձնարարական-պաշտօնագրով՝ յանձնաժողովիս անդամներէն Ազն. Սարգիս Էֆ. Սուին<sup>20</sup>, որմէ պիտի կրնայ ստանալ Վեհափառութիւնդ պահանջուած ամէն տեղեկութիւն եւ գործին մանրամասնութիւնը, ինչպէս եւ անվերապահ կերպով կրնայ անհրաժեշտ դատուած իրողութիւնները, կամ ցարդ ի Բեդերպուրգ կատարուած բանակցութիւնները հաղորդել յիշեալին:

Պաշտօնական թուղթերը պատրաստուելու վրայ են, որով յուսալի է, որ առ առաւելն 5 օրէն մեկնի մայրաքաղաքէս:

Ձեր Ս. Օծութեան պահանջած տոքումանները<sup>21</sup> եւս արդէն տպագրուած լինելով Սուին Էֆենտիի հետ կը յղենք ի Մայր Աթոռ:

Մաղթելով, որ Աստուած հարցն մերոց, զօրավիզ լինի քաջարթուն հովուապետիդ եւ արդիւնաւետ ընծայէ յանուն իւր չարչարուած եւ

բիրիցս դժբախտ հօտին, փրկութեան համար տարած Իւր Հայրական ջանքերն, մատչիմ ի համբոյր հայրապետական սրբազնած Աջոյն Վեհափառութեանդ:

Մնամ ամենախոնարհ որդի՝ Գ. Վարդ. Պալաքեան  
23/6 Նոյեմբեր 1912

Կ. Պոլիս

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Արման Կիրակոսեան, *Ակնարկներ Հայկական Հարցի Եւ Եղեռնի Միջազգային Ճանաչման*, Երեւան, Տիգրան Մեծ, 2006, էջ 5:
- <sup>2</sup> Գրիգորիոս Պալաքեանը (1879-1934) ծնուել է Եւդոկիայում (Թոքաթ): Նախակրթութիւնը ծննդավայրում ստանալուց յետոյ, կրթութիւնը շարունակում է Կարնոյ Սանասարեան Վարժարանում, ապա մեկնում Գերմանիա եւ Բեռլինի Համալսարանում սովորում է աստուածաբանութիւն եւ փիլիսոփայութիւն: 1915ին ի թիւս հարիւրաւոր այլ մտաւորականների, աքսորուել է Չանկըրը: Մի կերպ ազատուելով սպանդից՝ վերադարձել է Կ. Պոլիս: 1919ին մեկնում է Երոպա, ընտրում Մարսելի ապա Մանչեսթըրի հոգեւոր առաջնորդ:
- <sup>3</sup> Բնագիրը տե՛ս՝ Մատենադարան, Կաթողիկոսական Դիւան Արխիւային Ֆոնդ, Թղթապանակ 238, փաստաթուղթ 64:
- <sup>4</sup> Մատենադարան, Կաթողիկոսական Դիւան, թղթ. 238, գ. 64, էջ 1:
- <sup>5</sup> Նոյն, էջ 2:
- <sup>6</sup> Գ. Ալթունեան, «Թիւրքահայաստանի Նոր Ճգնաժամը» *Արարատ*, Սեպտեմբեր, 1912, էջ 798:
- <sup>7</sup> Տե՛ս՝ Մատենադարան, Կաթողիկոսական Դիւան, թղթ. 238, վաւ. 64, էջ 4:
- <sup>8</sup> Նոյն:
- <sup>9</sup> Հրաչիկ Միմոնեան, *Ազատագրական Պայքարի Ուղիներում*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2013:
- <sup>10</sup> Տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 17:
- <sup>11</sup> Պօղոս Նուպար Փաշա (1851-1930), հայ քաղաքական գործիչ:
- <sup>12</sup> Ռեմոն Պուանկարէ (1860-1934), ֆրանսիացի պետական գործիչ:
- <sup>13</sup> Տե՛ս՝ Մատենադարան, Կաթողիկոսական Դիւան, թղթ. 238, վ. 64, էջ 5:
- <sup>14</sup> Կ. Պոլսի Հայոց Պատրիարքութեան հասցեով տեղում էր հեռագրերի, նամակների, հանրագրերի անկասելի հոսք. դրանց հեղինակները պատրիարքից պահանջում էին դիմել Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ խնդրել, որ նա ստանձնի Հայկական Հարցի վերաբացման պատասխանատուութիւնն ու գլխաւոր հարցի լուծման համար սկսուելիք գործընթացը:
- <sup>15</sup> 1912 Դեկտեմբերի 21ին Կ. Պոլսի Հայոց Ազգային Ժողովը որոշում է Հայկական Հարցը բարձրացնել Լոնդոնում հրաւիրուելիք դեսպանների համաժողովում, որը պետք է քննարկէր Բալկանեան Առաջին Պատերազմի հարցը: Ժողովն ընտրում է Ապահովութեան Յանձնաժողով, որի կազմի մէջ մտնում էին Յովհաննէս Արշարունին (նախագահ), Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանը, Գրիգորիոս վարդապետ Պալաքեանը, Գնէլ վարդապետ Գալամբերեանը,

Ազգային Վարչութեան նախագահ Ստեփան Գարայեանը, Օսկան Մարտիկեանը, Վահան Փափազեանը, ուսուցչապետ Տէր-Յակոբեանը: Ապահովութեան յանձնաժողովի գործունէութիւնը բարենորոգումների ծրագրի մշակումն էր, որը պէտք է բաց քննարկուէր եւրոպական տէրութիւնների ներկայացուցիչների հետ բանակցութիւնների անցկացման ժամանակ: Յանձնաժողովի հրատարակած նիւթերն ու տեղեկութիւնները նպատակ ունէին ներկայացնել իրերի փաստական դրութիւնը Արեւմտեան Հայաստանում, պարզաբանել թուրքահայերի կարիքները եւ դրանց բաւարարման միջոցները: Յանձնաժողովի աշխատանքը եւ գոյութիւնը պէտք է հնարաւորինս զաղտնի լինէր: Այն բանից յետոյ երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացրեց Հայկական Հարցը՝ դիմելով ռուսական իշխանութիւններին եւ դրանով զբաղուելու պատասխանատուութիւնը վերցրեց իր վրայ, Ազգային Խորհուրդը ստացաւ հնարաւորութիւն միջազգային մակարդակով ձեականօրէն դուրս մնալու այդ խնդրագրում պաշտօնական մասնակցութիւն ունենալուց: Սակայն այն, հասկանալի պատճառներով, խուսափելով բացայայտ գործունէութիւնից միեւնոյն ժամանակ անհրաժեշտ էր համարում տեղեկանալ, աջակցել եւ կաթողիկոսին օգնել միջազգային ուժերին դիմելու հարցում: Այդ նպատակով էլ կազմաւորուեց վերոնշեալ Ապահովութեան Յանձնաժողովը, որի պարտքն էր ամէն բան անել ըստ հայ եկեղեցու հետ եղած պայամանաւորութեան եւ ցուցաբերել աջակցութիւն անհրաժեշտ նիւթերը, վկայութիւնները եւ նկատառումները հասանելի դարձնելու հարցում:

<sup>16</sup> Սան Ստեֆանոյի Պայմանագրի (19 Փետրուարի 1878) 16րդ յօդուածով Բարձր Դուռը պատրաստում էր բարեփոխումներ անցկացնել հայաբնակ վայրերում, սակայն մինչեւ 1912 ոչ մի էական բարեփոխում տեղի չունեցաւ:

<sup>17</sup> Հայկական Հարցն առաջին անգամ իր արտայայտութիւնը գտաւ Սան Ստեֆանոյի Պայմանագրում, որի 16րդ յօդուածով, Թուրքիան պէտք է բարեփոխումներ անցկացնէր հայաբնակ վայրերում, սակայն Մեծ Բրիտանիայի եւ Աւստրո-Հունգարիայի ճնշմամբ 1878 Յունիսի 1ին Բեռլինում հրաւիրուեց համաժողով, որտեղ ընդունուեց Սան Ստեֆանոյի Պայմանագրի 16րդ յօդուածի անգլիական խմբագրումը, որը կազմեց Բեռլինի Դաշնագրի 61րդ յօդուածը, ըստ որի Բարձր Դուռը պարտաւորուում է բարենորոգումներ իրականացնել հայաբնակ մարզերում եւ ապահովել հայերի անվտանգութիւնը քրդերից եւ չեքքեզներից: Բարձր Դուռը տէրութիւններին պարբերաբար կը հաղորդի այն միջոցների մասին որոնք ինքը ձեռք է առել, իսկ տէրութիւնները կը հսկեն դրանց կիրառմանը: Այսպիսով՝ հայերին հետաքրքրող խնդիրների լուծումը վերցուեց Ռուսաստանից եւ յանձնուեց եւրոպական տէրութիւնների տնօրինութեանը:

<sup>18</sup> Ռուս-թուրքական պատերազմում ռուսական զօրքերը 1877 Նոյեմբերի 6ին գրաւեցին Կարսը: Կարսի գրաւումից արդէն պարզ էր, որ ռուսական բանակը Կովկասեան Ճակատում յաղթանակի է հասել, որից յետոյ առանց մարտերի գրաւեց Ադրիանապոլիսը եւ Կարինը (Էրզրում): 1878 Փետրուարին ռուսական զօրքերն առանց դիմադրութեան մտան Էրզրում:

<sup>19</sup> Միխայիլ Կիրս (Գիրս, 1856-1932), ռուս դիւանագետ:

---

<sup>20</sup> Սարգիս Սուին (Սինկիւճեան), Պոլսի Ազգային Վարչութեան քարտուղար:

<sup>21</sup> Ֆրանսերէն document՝ փաստաթուղթ:

FATHER GRIGORIS BALAKIAN'S LETTER TO  
THE CATHOLICOS OF ALL ARMENIANS GEVORG V,  
CONCERNING THE ARMENIAN REFORMS OF 1912-1914  
(SUMMARY)

NAREK HAKOBYAN  
narhak1991@gmail.com

In the history of the “Armenian Question” one of the most important periods was the years between 1912 and 1914, when the issue of reforms in the Armenian populated Eastern Vilayets (Western Armenia) was discussed again and the “Armenian Question” appeared once more on the international stage.

The article presents the secret letter of Grigoris Balakian sent to the Catholicos of All Armenians, Gevorg V of Echmiadzin. The letter reports on the political situation in 1912 in the Ottoman Empire, the fate of the Western Armenians, the issue of reforms in Armenian populated areas, and the reopening of the “Armenian Question” as well as the role of the Catholicos of all Armenians and the Safety Committee in all these issues.